


$1 * > 18$

$** < 11$

$* 3 < 14$



♥ + ♥ = 10
 ♥ + ♥ + ♥ = 15
 ♥ + ♥ + ♥ + ♥ = 20



2

Մաս 1

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Սոկրատ Մկրտչյան

ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

2

ՄԱՍ 1

Հանրակրթական հիմնական դպրոցի
2-րդ դասարանի դասագիրք





ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ


ԵՐԵՎԱՆ • 2023


Երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից

Տպագրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով

 Բանավոր առաջադրանքներ:

 Գրավոր առաջադրանքներ:

 Կանաչ առաջադրանքները քեզ համար կանաչ

 ճանապարհի կհարթեն դեպի մաթեմատիկայի հետաքրքիր աշխարհը:



Այս նկարի առկայության դեպքում մի քանի անգամ ուշադիր դիտիր առաջադրանքը, ծածկիր այն, կատարիր առաջադրանքը: Ստուգիր ստացածդ արդյունքը:

••••• Այս նշանի առկայության դեպքում փորձիր բացահայտել օրինաչափությունը և ավելացնել ևս մեկ առաջադրանք:

ՀՏԴ 373:51(075.3)

ԳՄԴ 22.1g72

Մ 806

Մկրտչյան Սոկրատ

Մ 806

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 2: Հանրակրթական հիմնական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք / Ս. Մկրտչյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023. Մաս 1.— 112 էջ:

ՀՏԴ 373:51(075.3)

ԳՄԴ 22.1g72


Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789939990231

Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

ISBN 978-9939-99-023-1

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2023
© Մկրտչյան Ս., 2023
© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

Բարև, ես
Այգն եմ:



Ամբողջ տարվա
ընթացքում մենք
միասին ենք
լինելու:

Իսկ ես
Անին եմ:




Մաթեմատիկայի
զարմանալի
աշխարհը
մեզ է
սպասում:

Ես Աշոփն
եմ:



Եթե ուշադիր հետևես մեր
խորհուրդներին, ապա
մաթեմատիկայի խորհրդավոր
աշխարհը կդառնա նաև քոնր:

Ես էլ
Աննան եմ:



ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

Նախորդ հաջորդ մեծ, փոքր շուտ, ուշ շատ, քիչ

Նախորդ թիվը հաջորդ թիվը

1	2	3	4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17	18	19	20

1 Արտագրիր՝ ավելացնելով տրված թվի նախորդ և հաջորդ թվերը:

6	16
9	19

- 2 Հաշվիր 1-ից 20-ը:
- Հաշվելիս ո՞ր թվերը հանդիպեցին մինչև 7-ը:
 - Հաշվելիս ո՞ր թվերը հանդիպեցին 7-ից հետո:

3 Հաշվիր 1-ից 20-ը և ասա՛, թե հաշվելիս տրված թվերից որն է շուտ հանդիպում:

7 և 9 17 և 13 15 և 10 9 և 19

4 Համեմատիր: $>$, $<$, $=$

8 և 5	20 և 10
12 և 17	7 և 17
9 և 18	13 և 13

Հիշում ես
Երկու թվերից փոքր է այն, որը հաշվելիս շուտ է հանդիպում:



- Ո՞րն է քեզ ավելի հարմար՝ նախ պարզել փոքր թիվը, թե՞ մեծ թիվը:

5 Համեմատիր. $>$, $<$, $=$

$$9 + 1 \bigcirc 9$$
$$9 - 1 \bigcirc 9$$

$$16 + 1 \bigcirc 16$$
$$16 - 1 \bigcirc 16$$

$$15 + 1 \bigcirc 15 - 1$$
$$18 - 1 \bigcirc 18 + 1$$

6 Վերականգնիր անհավասարությունները:

$$1 * > 18$$

$$* 3 < 14$$


$$* > 8$$

$$* * < 11$$

$$* 9 < 20$$

7 Ընտրիր այնպիսի 3 թիվ, որոնց մասին խոսելիս կարողանաս օգտագործել նախորդ թիվ, հաջորդ թիվ բառերը:

• Շարունակելով միմյանց՝ փրված թվերը կարդացե՛ք հաշվելու հերթականությամբ:



• 1-ից 20 թվերից որո՞նք չկան այս եռանկյան մեջ: Որքա՞ն է այդ թվերի քանակը:



Կարմիրով թվերը գրիր աճման կարգով՝ փոքրից մեծ հերթականությամբ:




ԲԱՌԱՍՐԱՀ

8 Լրացրո՛ւ պնդումները՝ օգտագործելով նախորդ, հաջորդ, մեծ, փոքր, շուտ, ուշ բառերը:

- Երկու թվերից մեծ է այն, որը հաշվելիս ... է հանդիպում:
 - Երկու թվերից ... է այն, որը հաշվելիս շուտ է հանդիպում:
 - Եթե 12-ին գումարենք 1, կստանանք 12-ի ... թիվը:
 - Եթե 12-ից հանենք 1, կստանանք 12-ի ... թիվը:
-

9 Ըստ նկարի՝ նախադասություններում տեղադրիր **շատ**, **քիչ** բառերը:

- Շրջանները ... են քառակուսիներից:
- Եռանկյունները ... են շրջաններից:
- Քառակուսիները ... են եռանկյուններից:
-



ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀ

10 Աղյուսակում տվյալներ են Սոնայի, Աննայի ու Գրետայի ուլունքների քանակների մասին:

Անուն	Ուլունք
Սոնա	9
Աննա	6
Գրետա	12



- Քանի՞ ուլունք ունի աղջիկներից յուրաքանչյուրը:

Ընտրիր ճիշտ պնդումը.

- $9 > 6$ նշանակում է Սոնայի ուլունքները շատ են Աննայի ուլունքներից:
- $6 < 12$ նշանակում է Գրետայի ուլունքները քիչ են Աննայի ուլունքներից:
- $9 < 12$ նշանակում է Գրետայի ուլունքները քիչ են Սոնայի ուլունքներից:
-

Պատասխանի ստուգում: Պարզիր, թե որ շարքի ուլունքները աղջիկներից որինն է:

Պնդումը ստուգիր նկարի օգնությամբ:



ՄԱՐԶԱՍՐԱՀ

11 Մի քանի անգամ կարդա՛ հավասարությունները և փորձիր անգիր սովորել:



Գրիր կապույտով գրված հավասարությունները:

$1 + 2 = 3$	$1 + 3 = 4$
$2 + 2 = 4$	$2 + 3 = 5$
$3 + 2 = 5$	$3 + 3 = 6$
$4 + 2 = 6$	$4 + 3 = 7$
$5 + 2 = 7$	$5 + 3 = 8$
$6 + 2 = 8$	$6 + 3 = 9$
$7 + 2 = 9$	$7 + 3 = 10$
$8 + 2 = 10$	$8 + 3 = 11$
$9 + 2 = 11$	$9 + 3 = 12$

12 Բացահայտիր օրինաչափությունը և վերականգնիր թվերի շարքը:


1	3	5					15
---	---	---	--	--	--	--	----

10	20	30					80
----	----	----	--	--	--	--	----

2	4	6					16
---	---	---	--	--	--	--	----

5	7	9					19
---	---	---	--	--	--	--	----

13 Շարունակելով մինչևնոց՝ լրացրե՛ք թվերը:



- Ի՞նչ հուշումներ ես նկատել:
- Ի՞նչ գիտելիք ես կիրառելու:
- Վերջին շրջանում գրված 4-ը ինչո՞վ կարող է օգնել քեզ:

14 Հայկի կատուն ունի 3 ձագ: Աննայի կատուն ունի 5 ձագ: Նրանցից ո՞ւմ կատուն ավելի քիչ ձագ ունի:


15 Դասարանում կան 14 աղջիկ և 12 տղա: Այդ դասարանում տղաներն են քիչ, թե՛ աղջիկները:

16 Միցույթում Սոնան վաստակեց 7 միավոր, իսկ Արան՝ 12: Ո՞վ ավելի շատ միավոր վաստակեց մրցույթում:

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՆՔ


17 Մատիտը տեղադրելով տարբեր դիրքերում՝ համեմատեք ձեր առանձնացրած միավորների քանակը ընդգծված քանակի հետ և կազմեք անհավասարություններ:



6 ○ □	6 ○ □	6 ○ □	6 ○ □
□ ○ 6	□ ○ 6	□ ○ 6	□ ○ 6


Օրինակ՝
 $6 < 9$
 $9 > 6$

18 Բացահայտեք կարգը և լրացրեք վանդակները:




3	3	3
3	2	1


Յուրաքանչյուր թիվ ցույց է տալիս խորանարդների քանակը տվյալ շարքում և սյունակում:



3		



	2	



		1




Տարիկն Արային ու Սոնային տվեց հավասար քանակով բլիթներ: Արան գիտեր, որ Սոնան շատ է սիրում տարիկի թխած բլիթները, և իր բլիթներից երկուսը տվեց քրոջը:

- Գնահատե՛ք Արայի կատարած քայլը:
- Արան երկուսից ավելի՞ բլիթ ուներ: Ո՞ր բառն է հուշում դրա մասին:
- Ո՞վ ավելի շատ բլիթ ունեցավ:

Ընտրե՛ք ճիշտ պնդումը.

- Սոնան ունեցավ 2 բլիթ ավելի, քան Արան:
 - Սոնան ունեցավ 4 բլիթ ավելի, քան Արան:
- Պատասխանը հիմնավորե՛ք՝ բլիթների փոխարեն օգտագործելով հաշվեճողիկներ:



ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Յուրաքանչյուր կետ հիմնավորի՛ր օրինակներով:

Ես արդեն գիտեմ.

- Ցանկացած թվի հաջորդ թիվը:
- Ցանկացած թվի նախորդ թիվը:
- Երկու թվերից փոքր է այն, որը հաշվելիս շուտ է հանդիպում:
- Երկու թվերից մեծ է այն, որը հաշվելիս ուշ է հանդիպում:

Ես արդեն կարող եմ.

- Գտնել տրված թվի հաջորդ թիվը:
- Գտնել տրված թվի նախորդ թիվը:
- Համեմատել ցանկացած երկու թիվ 20-ի սահմաններում:
- Անգիր ասել 2-ի գումարման աղյուսակը:
- Անգիր ասել 3-ի գումարման աղյուսակը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

գումարելի
գումար
տարբերություն
նվազելի
հանելի


գումարելի
գումարելի
գումար

$$6 + 5 = 11$$



նվազելի
հանելի
տարբերություն

$$11 - 5 = 6$$

20 Տրված թվերով կազմիր չորս հավասարություն:
Անվանիր հավասարության բաղադրիչները:



Օրինակ՝



$7 + 8 = 15$	$15 - 7 = 8$
$8 + 7 = 15$	$15 - 8 = 7$

Ո՞ր դեպքում է 15-ը գումար, իսկ ո՞ր դեպքում՝ նվազելի:

21 Հաշվիր:

$$\begin{array}{l} 7 + 2 \\ 2 + 7 \\ 17 + 2 \\ 2 + 17 \end{array}$$

$$\begin{array}{l} 6 + 3 \\ 3 + 6 \\ 16 + 3 \\ 3 + 16 \end{array}$$

$$\begin{array}{l} 17 - 14 \\ 18 - 14 \\ 19 - 14 \\ 20 - 14 \end{array}$$

$$\begin{array}{l} 17 - 12 \\ 18 - 12 \\ 19 - 12 \\ 20 - 12 \end{array}$$





ԲԱՌԱՍՐԱՀ

22 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **գումար, գումարելի, նվազելի, հանելի, տարբերություն** բառերը:

- $7 + 8$ արտահայտության մեջ 7 և 8 թվերը ... են:
- $16 - 9$ արտահայտության մեջ 16-ը ... է, իսկ 9-ը՝ հանելին:
- $50 - 30 = 20$ հավասարության մեջ 50-ը նվազելին է, իսկ 30-ը՝ ...:
- 12 և 5 թվերի ... 17 է, իսկ ... 7 է:
.....

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀ

23 Կազմիր հավասարություն՝ ըստ գծապատկերի:



24 Կազմիր հավասարություններ՝ աղյուսակներում պակաս տվյալները լրացնելու համար:

Նվազելի	19	20	12
Հանելի	4	14	8
Տարբերություն			

Գումարելի	16	2	12
Գումարելի	4	14	8
Գումար			

ՄԱՐԶԱՄՐԱՀ

25 Մի քանի անգամ կարդա՛ հավասարությունները և փորձիր անգիր սովորել:



Գրի՛ր կապույտով գրված հավասարությունները:

$1 + 4 = 5$	$1 + 5 = 6$
$2 + 4 = 6$	$2 + 5 = 7$
$3 + 4 = 7$	$3 + 5 = 8$
$4 + 4 = 8$	$4 + 5 = 9$
$5 + 4 = 9$	$5 + 5 = 10$
$6 + 4 = 10$	$6 + 5 = 11$
$7 + 4 = 11$	$7 + 5 = 12$
$8 + 4 = 12$	$8 + 5 = 13$
$9 + 4 = 13$	$9 + 5 = 14$


26 Հաշվիր:

$6 + 12$	$12 - 6$
$7 + 12$	$12 - 7$
.....


$14 + 2$	$14 - 12$
$15 + 2$	$15 - 12$
.....

$15 + 5$	$20 - 13$
$14 + 5$	$19 - 13$
.....

27 Շարունակելով միմյանց՝ կատարե՛ք գործողությունները:



28 Անվանիր սլաքներին համապատասխան թվերը:



29 **Կատակ-խնդիր:** Զամբյուղում կար 6 խնձոր: Սոնան կիսեց խնձորներից մեկը և կրկին դրեց զամբյուղի մեջ: Քանի՞ խնձոր եղավ զամբյուղում:




ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

30 Սրանք շների հավատարիմ ու ընկերասեր տեսակներից են: Պարզվիր, թե շներից որն ինչ անուն ունի:



Ալֆա
Լեսի

Լաքի
Լեսի



- Կարող են արդյոք կենդանիները լինել հավաքարիմ կամ ընկերասեր:
- Կարծում եմ՝ նախ պետք է փորձեք հասկանալ **հավաքարիմ** և **ընկերասեր** բառերը:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ

31 Բացահայտե՛ք գաղտնագրում թաքնված մեր սիրելի թռչուններից մեկի անվանումը:

$9 + 9$	Գ
---------	---

$6 + 6$	Ա
---------	---

12	7	12	18	17	14

$15 - 8$	Ր
----------	---

$9 + 8$	Ի
---------	---

$14 - 0$	Լ
----------	---

Ինչ գիտեք այդ թռչունի մասին: Կա՞ն արդյոք ձեր փարածքում այդ թռչուններից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Յուրաքանչյուր կետ հիմնավորիր օրինակներով:

Ես արդեն կարող եմ.

- Կազմել երկու թվերի գումարը և գտնել դրա արժեքը:
- Կազմել երկու թվերի փարբերությունը և գտնել դրա արժեքը:
- Անգիր ասել 4-ի գումարման աղյուսակը:
- Անգիր ասել 5-ի գումարման աղյուսակը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

գումար
գումարել
ընդամենը
ընդհանուր


$$6 + 4 = 10$$

6-ին գումարելով 4՝ պարզում ենք, թե որքան է 6 և 4 թվերի գումարը:

$$4 + 6 = 10$$

Գումարելիների տեղափոխությունից գումարը չի փոխվում:

- 32** Պարզիր, թե որքան է տրված երկու թվերի գումարը, և կազմիր երկուական հավասարություն:



Օրինակ՝ 7, 12

$$7 + 12 = 19$$

$$12 + 7 = 19$$

ԲԱՌԱՍՐԱՀ

- 33** Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **գումար**, **գումարել** բառերը:

- 7 և 5 թվերի գումարը գտնելու համար պետք է 7-ին ... 5:
.....
- Եթե գումարելիների տեղերը փոխեն, դրանից ... չի փոխվի: Օրինակ՝ ...:


- 34** Ընդհանուր, ընդամենը բառերը տեղադրիր՝ նախադասություններում:

- Ծաղկամանում ծաղիկների ... քանակը 5 է:
- Ծաղկամանում կա ... 3 կարմիր և 2 դեղին ծաղիկ:



ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԱՀ

35 Մրանք Սոնայի ուլունքներն են: Դիտիր նկարը և ընտրիր ճիշտ պնդումները:




- 6-ին գումարելով 5՝ կստանանք Սոնայի ուլունքների ընդհանուր քանակը:
- 6-ից հանելով 5՝ կստանանք Սոնայի ուլունքների ընդհանուր քանակը:
- 6-ին գումարելով 5՝ պարզում ենք, թե ընդամենը քանի ուլունք ունի Սոնան:

Խնդիր: Սոնան ունի 6 կարմիր և 5 կապույտ ուլունք: Ընդամենը քանի՞ ուլունք ունի Սոնան:


Հուժուժ									
$6 + 5$									
$6 + 5 = 11$									
Պատ.՝ 11 ուլունք:									

$6 + 5$

Այս արտահայտությունը ցույց է տալիս Սոնայի ուլունքների ընդհանուր քանակը:



36 Քսակներից մեկում կա 8 կոնֆետ, իսկ մյուսում՝ 6 կոնֆետ:



$6 + 8$

$8 - 6$

$8 + 6$

Ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս կոնֆետների ընդհանուր քանակը քսակներում:

37 Ծառի մի ճյուղին թառել էր 9 սարյակ, իսկ մյուս ճյուղին՝ 8 սարյակ: Ընդամենը քանի՞ սարյակ կար ծառին թառած:
.....

38 Հայրիկի գնած ձմերուկներից մեկը 6 կգ էր, իսկ մյուսը՝ 8 կգ: Ընդամենը քանի՞ կիլոգրամ ձմերուկ է գնել հայրիկը:
.....

39 Արկղում կա 12 կգ խնձոր և 5 կգ տանձ: Որքա՞ն է արկղում եղած մրգի ընդհանուր զանգվածը:
.....

ՄԱՐԶԱՍՐԱՀ

40 Հաշվիր տրված թվերի գումարն ու տարբերությունը:

$$\begin{array}{r} 8 \text{ և } 5 \\ 7 \text{ և } 5 \end{array}$$

$$\begin{array}{r} 13 \text{ և } 5 \\ 14 \text{ և } 5 \end{array}$$

$$\begin{array}{r} 11 \text{ և } 5 \\ 12 \text{ և } 5 \end{array}$$

41 Ասա՛ երկու թիվ, որոնց տարբերությունը 7 է, և կազմիր հավասարություն: Կազմիր այդպիսի 6 հավասարություն:

42 Ասա՛ երկու թիվ, որոնց գումարը 18 է, և կազմիր հավասարություն: Կազմիր այդպիսի 6 հավասարություն:

43 Բացահայտիր օրինաչափությունը և լրացրո՛ւ դատարկ վանդակները:


20	16	12			0
----	----	----	--	--	---

1	4	7				19
---	---	---	--	--	--	----

18	15	12			3
----	----	----	--	--	---

2	5	8				20
---	---	---	--	--	--	----

44 Շարունակելով միմյանց՝ կատարե՛ք գործողությունները:




- 45** Կատակ-խնդիր: Ափսեում կան 8 խնձոր և 12 տանձ: Ընդամենը քանի՞ խնձոր կա ափսեում:
.....

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՆՔ

- 46** Տեսե՛ք՝ ինչ հետաքրքիր օրինաչափություն են նկատել Անին ու Աննան 1-ից 5 թվերի գումարման աղյուսակում:



+	1	2	3	4	5
1	2	3	4	5	6
2	3	4	5	6	7
3	4	5	6	7	8
4	5	6	7	8	9
5	6	7	8	9	10

$4 + 6 = 10$
 $5 + 5 = 10$

Փորձե՛ք դուք էլ նկատել օրինաչափություններ և, ըստ դրանց, կազմե՛ք հավասարություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Յուրաքանչյուր կետ հիմնավորի՞ր 2-ական օրինակով:

Ես արդեն կարող եմ.

- Խոսքիս մեջ գործածել **գումար, գումարելի, գումարել** բառերը:
- Խոսքիս մեջ գործածել **ընդհանուր, ընդամենը** բառերը:
- Լուծել խնդիրներ **գումարը** գտնելու վերաբերյալ:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

տարբերություն
 հանել
 –ով մեծ
 –ով փոքր
 –ով ավելի
 –ով պակաս

$$12 - 7 = 5$$

12-ից հանելով 7՝ պարզում ենք, թե որքան է 12 և 7 թվերի տարբերությունը:

12 և 7 թվերի տարբերությունը ցույց է տալիս, թե որքանով է 12-ը մեծ 7-ից:

12 և 7 թվերի տարբերությունը ցույց է տալիս, թե որքանով է 7-ը փոքր 12-ից:

47 Պարզիր տրված թվերի տարբերությունը:

12, 8

16, 12

13, 13

48 Պարզիր, թե որքանով է առաջին թիվը մեծ երկրորդից:

12, 7

17, 7

15, 13

49 Պարզիր, թե որքանով է առաջին թիվը փոքր երկրորդից:

12, 15

7, 17

5, 13

50 Անիի մտապահած թիվը 3-ով փոքր է Սոնայի մտապահած թվից: Սոնայի մտապահած թիվը որքանով է մեծ Անիի մտապահած թվից:

.....

- Պատասխանը հիմնավորիր օրինակներով:


ԲԱՌԱՍՐԱՀ

51 **Տարբերություն, հանել, փոքր, մեծ** բառերը տեղադրիր նախադասություններում:

- 19 և 5 թվերի տարբերությունը գտնելու համար պետք է ...:
- 15-ից հանելով 5՝ կստանանք 15 և 5 թվերի ...:
- 14 և 5 թվերի ... ցույց է տալիս, թե որքանով է 14-ը ... 5-ից:
- 14 և 5 թվերի ... ցույց է տալիս, թե որքանով է 5-ը ... 14-ից:

52 **Տարբերություն, ավելի, պակաս** բառերը տեղադրիր նախադասություններում:


- Կապույտ և կարմիր կոճգամների ... 3 կոճգամ է:
- Կապույտ կոճգամները 3-ով ... են կարմիրներից:
- Կարմիր կոճգամները 3-ով ... են կապույտներից:



ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀ

53 Կարմիրները Հասմիկի ուլունքներն են, իսկ կապույտները՝ Աննայի:

Ըստ նկարի՝ մեկնաբանիր պնդումները.



- 9-ից հանելով 5՝ պարզում ենք, թե որքան է Աննայի ու Հասմիկի ուլունքների տարբերությունը:
- 9-ից հանելով 5՝ պարզում ենք, թե որքանով են Հասմիկի ուլունքները ավելի Աննայի ուլունքներից:
- 9-ից հանելով 5՝ պարզում ենք, թե որքանով են Աննայի ուլունքները պակաս Հասմիկի ուլունքներից:

Խնդիր

Հասմիկն ունի 9 ուլունք, իսկ Աննան՝ 5 ուլունք: Հասմիկի ուլունքները որքանով են ավելի Աննայի ուլունքներից:

Տեղրում կարող ես այսպես գրել:

Հուժուժ	
9	- 5
9 - 5 = 4	
Պատ.՝ 4-ով:	



- 54** Լողավազանում կա 15 լողորդ և ընդամենը 12 ակնոց: Ակնոցների քանակը որքանով է պակաս լողորդների քանակից:
- Օգտագործելիս քանի՞ լողորդ ակնոց չի ունենա:
- 55** Հայկենց այգում կա 12 տանձենի և 6 խնձորենի:
- Ձևակերպիր 4 հարց և պատասխանիր քո հարցերին:

ՄԱՐԶԱՍՐԱՀ

- 56** Մի քանի անգամ կարդա՛ հավասարությունները և փորձիր սովորել անգիր:



Գրի՛ր կապույտով գրված հավասարությունները:

1 + 6 = 7	1 + 7 = 8
2 + 6 = 8	2 + 7 = 9
3 + 6 = 9	3 + 7 = 10
4 + 6 = 10	4 + 7 = 11
5 + 6 = 11	5 + 7 = 12
6 + 6 = 12	6 + 7 = 13
7 + 6 = 13	7 + 7 = 14
8 + 6 = 14	8 + 7 = 15
9 + 6 = 15	9 + 7 = 16

- 57** Շարունակելով միմյանց՝ կատարե՛ք գործողությունները:



58 Տուփերից առաջինում կա 8 ձու, իսկ երկրորդում՝ 12 ձու: Ընդամենը քանի՞ ձու կա այդ երկու տուփերում:

59 Հայկն օգնեց մայրիկին, և նրանք միասին պատրաստեցին 7 մսով և 13 կարտոֆիլով կարկանդակ: Ընդամենը քանի՞ կարկանդակ պատրաստեցին Հայկն ու մայրիկը միասին:
.....

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱՀ

ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՆՔ

60 Ուսումնասիրե՛ք աղյուսակը և շարունակե՛ք լրացնել 14-ի կազմությունը:

$$14 = 9 + 5$$

$$14 = \square + \square$$

$$14 = \square + \square$$

$$14 = 8 + 6$$

$$14 = \square + \square$$

+	1	2	3	4	5	6	7	8	9
1	2	3	4	5	6	7	8	9	10
2	3	4	5	6	7	8	9	10	11
3	4	5	6	7	8	9	10	11	12
4	5	6	7	8	9	10	11	12	13
5	6	7	8	9	10	11	12	13	14
6	7	8	9	10	11	12	13	14	15
7	8	9	10	11	12	13	14	15	16
8	9	10	11	12	13	14	15	16	17
9	10	11	12	13	14	15	16	17	18

- Վերջերք չորսից հինգ թիվ և աղյուսակի օգնությամբ բացահայտե՛ք դրանց կազմությունը:
- Արդյունքները գրե՛ք հավասարությունների տեսքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՐԱՀ

Յուրաքանչյուր կետ հիմնավորի՛ր օրինակներով:

Ես արդեն կարող եմ.

- Խոսքիս մեջ գործածել **տարբերություն, հանել, -ով մեծ, -ով փոքր, ավելի, պակաս** բառերը:
- Անգիր ասել 6-ի և 7-ի գումարման աղյուսակները:
- Պարզել, թե թիվը որքանով է մեծ կամ փոքր մյուս թվից:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

մեծացնել
ավելացնել
դարձավ
եղավ

$$14 + 5 = 19$$

14-ը 5-ով մեծացնելու համար պետք է 14-ին 5 գումարել:

14-ից 5-ով մեծ թիվը ստանալու համար պետք է 14-ին 5 գումարել:

61 Գտիր.

- 8 և 6 թվերի գումարը:
- 8-ից 6-ով մեծ թիվը:

- 6 և 8 թվերի գումարը:
- 6-ից 8-ով մեծ թիվը:

62 Շարունակելով միմյանց՝ տրված թվերը մեծացրեք 4-ով:

(5) (4) (6) (3)

63 Շարունակելով միմյանց՝ ասե՛ք տրված թվերից 6-ով մեծ թվերը:

(7) (14) (8) (13)

(9) (12) (10) (11)

64 Կազմիր արտահայտություն.

13-ը մեծացրո՛ւ 5-ով: Հաշվիր արտահայտության արժեքը:
.....

65 Եթե 12-ը 5-ով մեծացնես, կստանաս Սոնայի մտապահած թիվը: Ո՞ր թիվն է մտապահել Սոնան:
.....

66 Հայկի մտապահած թիվը 11-ից 8-ով մեծ է: Ո՞ր թիվն է մտապահել Հայկը:
.....

ԲԱՌԱՍՐԱԿ

67 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **մեծացնել, գումարել** բառերը:

- 7-ին ... 5' սրանում են 7-ից 5-ով մեծ թիվ:
.....
- 17-ը 2-ով մեծացնելու համար պետք է 17-ին ... 2:
.....
- 12-ը 8-ով ... համար պետք է 12-ին գումարել 8:
.....
- 10-ից 7-ով մեծ թիվ սրանալու համար պետք է 10-ին ... 7:
.....

68 Ըստ նկարի՝ լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **դարձավ, եղավ, ավելացնել** բառերը:


- Երբ Աննան ափսեում ավելացրեց ևս 2 բանան, ափսեում բանանների քանակը ... 7:
- Երբ Սոնան ափսեում ավելացրեց ևս 2 բանան, ափսեում ... 7 բանան:
- Եթե Արան ափսեում ... ևս 2 բանան, ափսեում բանանների քանակը ... 7:



ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱԿ

69 Կարմիրները Սոնայի ունեցած ուլունքներն են: Կապույտները ընկերներն են ավելացրել:

Դիտի՛ր նկարը և մեկնաբանի՛ր պնդումը:



9-ին գումարելով 5' կպարզենք, թե 5-ով ավելացնելուց հետո որքան դարձավ Սոնայի ուլունքների քանակը:

Խնդիր: Սոնան ուներ 9 ուլունք: Ընկերները նրա ուլունքներն ավելացրին ևս 5-ով: Որքա՞ն դարձավ Սոնայի ուլունքների քանակը:

9 + 5

Այս արտահայտությունը ցույց է տալիս, թե 5-ով ավելացնելուց հետո որքան դարձավ Սոնայի ուլունքների քանակը:

Տեղրում կարող ես այսպես գրել.



Լուծում	
9 + 5	
9 + 5 = 14	
Պատ.՝ 14 ուլունք:	

70 Պարի խմբակ էին հաճախում 12 սովորող: Այս տարի խմբում ավելացավ ևս 5 սովորող: Որքա՞ն եղավ պարի խմբակում սովորողների ընդհանուր քանակը:

71 Տուփում կար 12 ամրակ: Գայանեն 8-ով ավելացրեց դրանց քանակը: Քանի՞ ամրակ եղավ տուփում:

72 Արկղում կար 12 կգ խնձոր: Պապիկը 8 կգ-ով ավելացրեց այն: Քանի՞ կիլոգրամ խնձոր եղավ արկղում:

ՄԱՐԶԱՍՐԱՀ

73 Մի քանի անգամ կարդա՛ հավասարությունները և փորձի՛ր անգիր սովորել:

1 + 8 = 9	1 + 9 = 10
2 + 8 = 10	2 + 9 = 11
3 + 8 = 11	3 + 9 = 12
4 + 8 = 12	4 + 9 = 13
5 + 8 = 13	5 + 9 = 14
6 + 8 = 14	6 + 9 = 15
7 + 8 = 15	7 + 9 = 16
8 + 8 = 16	8 + 9 = 17
9 + 8 = 17	9 + 9 = 18



Գրի՛ր կապույտով գրված հավասարությունները:

74 Արան գնեց 8 կարմիր և նույնքան էլ կանաչ փուչիկ: Ընդամենը քանի՞ փուչիկ գնեց Արան:

75 Գոռենց դասարանում սովորում են 9 տղա և նույնքան աղջիկ: Քանի՞ աշակերտ կա Գոռենց դասարանում:

76 Համեմատիր:

$19 - 8$	\bigcirc	$9 + 8$
$17 - 3$	\bigcirc	$6 + 8$
$14 - 7$	\bigcirc	$7 + 0$

$6 + 8$	\bigcirc	$9 + 8$
$9 + 9$	\bigcirc	$8 + 8$
$7 + 8$	\bigcirc	$9 + 6$

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱՀ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ

77 Երկրորդ դասարանցիների որոշումը

Երկրորդ դասարանցիները դասարանում ունեին 7 ծաղիկ: Նրանք որոշեցին խնամել մեկական ծաղիկ և փարեվերջում պարզել, թե ով կլինի «**Ծաղկի լավագույն խնամող**» մրցույթի մրցանակակիրը: Այդ նպատակով ավելացրին ևս այնքան ծաղիկ, որքան կար:



- Ինչի՞ց կարող ես եզրակացնել, թե ընդամենը քանի ծաղիկ են խնամելու նրանք:
- Ինչի՞ց կարող ես եզրակացնել, թե ընդամենը քանի աշակերտ կա այդ դասարանում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՐԱՀ

- Գնահատիր երկրորդցիների կայացրած որոշումը:
- Գնահատիր 8-ի և 9-ի գումարման աղյուսակների քո իմացությունը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

փոքրացնել
պակաս
մնաց
դարձավ

$$14 - 5 = 9$$

14-ը 5-ով փոքրացնելու
համար պետք է 14-ից 5 հանել:

14-ից 5-ով փոքր թիվը ստանալու
համար պետք է 14-ից 5 հանել:

78 Գտի՛ր.

- 18 և 6 թվերի տարբերությունը:
- 18-ից 6-ով փոքր թիվը:

79 Շարունակելով մինչանց՝ տրված թվերը փոքրացրե՛ք 8-ով:

9 20 10 19

80 Շարունակելով մինչանց՝ ասե՛ք տրված թվերից 9-ով փոքր թվերը:

11 18 12 17

13 16 14 15

81 Կազմի՛ր արտահայտություններ.

16-ը փոքրացրո՛ւ 5-ով, 8-ով, 12-ով և հաշվի՛ր արժեքները:
.....

82 Եթե 20-ը 8-ով փոքրացնես, կստանաս Աշոտի մտապահած թիվը: Ո՞ր թիվն է մտապահել Աշոտը:
.....

83 Սոնայի մտապահած թիվը 7-ով փոքր է 20-ից: Ո՞ր թիվն է մտապահել Սոնան: 20-ը որքանո՞վ է մեծ Սոնայի մտապահած թվից:
.....

ԲԱՌԱՍՐԱՀ

84 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **փոքրացնել, հանել** բառերը:

- 17-ը 9-ով փոքրացնելու համար պետք է 17-ից ... 9:
.....
- 12-ը 8-ով ... համար պետք է 12-ից հանել 8:
.....

85 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **պակասեցնել, մնաց, դարձավ** բառերը:


- Երբ տատիկը պակասեցրեց արկղում ձվերի քանակը 5-ով, արկղում ... 7 ձու:
.....
- Երբ տատիկը արկղում ձվերի քանակը ... 5-ով, արկղում ձվերի քանակը ... 7:
.....



ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀ

86 Սրանք Սոնայի ուլունքներն են: Գծանշածները նա տվել է ընկերներին:

Դիտի՛ր նկարը և ընտրի՛ր ճիշտ պնդումները:



- Սոնայի ուլունքները 5-ով պակասել են:
- Սոնայի ուլունքները 5-ով ավելացել են:
- 15-ից հանելով 5՝ կստանանք Սոնայի ուլունքների քանակը 5-ով պակասեցնելուց հետո:
- 15-ից հանելով 5՝ պարզում ենք, թե 5-ով պակասեցնելուց հետո որքան ուլունք մնաց Սոնայի մոտ:

Խնդիր: Սոնան դպրոց էր բերել 15 ուլունք: Նա 5 ուլունք տվեց ընկերներին: Քանի ուլունք մնաց Սոնայի մոտ:

15 – 5

15-ից հանելով 5՝ կտրանանք Սոնայի ուլունքների քանակը 5-ով պակասեցնելուց հետո:

Հուժուժ	
15	– 5
15	– 5 = 10
Պատ.՝ 10 ուլունք:	



87 Ավտոբուսում կար 20 ուղևոր: Կանգառում ուղևորների թիվը ավտոբուսում 4-ով պակասեց: Քանի ուղևոր մնաց ավտոբուսում:
 • Ինչպես կարող էր ուղևորների թիվը կանգառում 4-ով պակասել:

88 Արկղում կար 14 շիշ մրգահյութ: Ճաշին 9 շիշը խմեցին: Քանի շիշ հյութ մնաց արկղում:




89 Կար 14 օղաբլիթ: Հայկը դրանցից 8-ը կերավ: Քանի օղաբլիթ մնաց ափսեում:
 ••••

90 Գիրքը, որն Անին կարդում է, ունի 16 էջ: 7 էջ նա արդեն կարդացել է: Քանի էջ է նրան մնացել կարդալու:
 ••••

ՄԱՐԶԱՍՐԱՀ

91 Ծառի ճյուղին թառել էր 9 սարյակ: Դրանց միացան ևս 5 սարյակ: Ընդամենը քանի սարյակ եղավ ծառի ճյուղին:
 ••••



92 Շաշկու տախտակին կային 8-ական սև ու սպիտակ խաղաքարեր: Արայի խելամիտ քայլի արդյունքում սպիտակ խաղաքարերը 3-ով պակասեցին:

- Ո՞ր գույնի խաղաքարերով էր խաղում Արան:
- Այդ քայլից հետո որքան դարձավ սպիտակների քանակը:
- Այդ քայլից հետո որքան դարձավ սևերի քանակը:

93 Հաշվիր:





$$\begin{aligned} 3 + 17 - 17 \\ 5 + 15 - 15 \\ 7 + 13 - 13 \\ \dots \end{aligned}$$

$$\begin{aligned} 15 - 14 + 14 \\ 14 - 13 + 13 \\ 13 - 12 + 12 \\ \dots \end{aligned}$$

$$\begin{aligned} 15 + 4 - 15 \\ 14 + 4 - 14 \\ 13 + 4 - 13 \\ \dots \end{aligned}$$

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

94 Լրացրեք դատարկ վանդակները:



ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Ես արդեն կարող եմ.

- Խոսքիս մեջ գործածել **փոքրացնել** բառը:
- Խոսքիս մեջ գործածել **մեծացնել** բառը:
- Կազմել խնդիր՝ օգտագործելով **մնաց, դարձավ** բառերը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

որքանով է մեծ
որքանով է փոքր
որքանով է ավելի
որքանով է պակաս

$$15 - 9 = 6$$

15-ի և 9-ի տարբերությունը ցույց է տալիս, թե 15-ը որքանով է մեծ 9-ից:

15-ի և 9-ի տարբերությունը ցույց է տալիս, թե 9-ը որքանով է փոքր 15-ից:

95 Հաշվիր 11 և 6 թվերի տարբերությունը և ասա՛, թե որքանով է.

- 11-ը մեծ 6-ից
- 6-ը փոքր 11-ից

96 Պարզիր, թե որքանով է.

- 18-ը մեծ 12-ից
- 15-ը մեծ 10-ից
- 14-ը փոքր 18-ից
- 16-ը փոքր 20-ից
- 30-ը փոքր 80-ից
- 90-ը մեծ 80-ից

ԲԱՌԱՍՐԱՀ

97 Լրացրո՛ւ նախադասությունները՝ գործածելով **որքանով է մեծ, որքանով է փոքր** արտահայտությունները:


- 17 և 12 թվերի տարբերությունը ցույց է տալիս, թե 12-ը ... 17-ից:
- 17 և 12 թվերի տարբերությունը ցույց է տալիս, թե 17-ը ... 12-ից:
- Որպեսզի պարզենք, թե 16-ը ... 9-ից, պետք է 16-ից հանենք 9:
- 13-ից հանելով 8՝ կպարզենք, թե 8-ը ... 13-ից:

98 Լրացրո՛ւ նախադասությունները՝ գործածելով **որքանով է ավելի, որքանով է պակաս** արտահայտությունները:

- Որպեսզի իմանանք, թե 14 ուլունքը ... 8 ուլունքից, պետք է 14-ից հանենք 8:
.....
- Որպեսզի պարզենք, թե 5 խնձորը ... 12 փանձից, պետք է 12-ից հանենք 5:
.....

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀ

99 Սրանք Սոնայի ուլունքներն են: Դիտիր նկարը և մեկնաբանիր պնդումները:



- 14-ից հանելով 9՝ կստանանք, թե կարմիր ուլունքները որքանով են ավելի կապույտներից:
- 14-ից հանելով 9՝ կստանանք, թե կապույտ ուլունքները որքանով են պակաս կարմիրներից:

Խնդիր: Սոնան ունի 14 կարմիր և 9 կապույտ ուլունք: Սոնայի կարմիր ուլունքները որքանով են ավելի կապույտներից:


$$14 - 9$$

14-ից հանելով 9՝ կպարզենք, թե Սոնայի կարմիր ուլունքները որքանով են ավելի կապույտներից:

Լուծում
$14 - 9$
$14 - 9 = 5$
Պատ.՝ 5-ով:



100 Արկղում կա 14 կանաչ և 8 կապույտ գնդակ: Կանաչ գնդակները որքանով են ավելի կապույտներից:




- Կապույտ գնդակները որքանով են պակաս կանաչներից:

101 Դաշտում արածում էին 14 սպիտակ և 9 սև գառնուկ: Սև գառնուկները որքանով են պակաս սպիտակներից:


102 Դասարանում կա 17 աշակերտ, իսկ ուսուցչուհու մոտ՝ աշխատանքային 20 թերթիկ: Մեկական թերթիկ բաժանելու դեպքում քանի՞ թերթիկ կավելանա:

103 Նկարից ստացիր տվյալներ և պատասխանիր հարցերին:



- Քանի՞ սանտիմետրով է կարմիր հարվածը երկար կապույտից:
- Որքանով է կանաչ հարվածը կարճ կապույտից:
.....

104 Ըստ նկարի տվյալների՝ պատասխանիր հարցերին:



- Որքան է կարմիր ժապավենի երկարությունը:
- Քանի՞ եղանակով կարող ես պարզել, թե որքանով է կապույտ ժապավենը երկար կարմիրից:
.....

ՄԱՐԶԱՄՐԱՀ


105 Հաշվիր:

$3 \text{ դմ} + 6 \text{ դմ}$
 $5 \text{ դմ} - 2 \text{ դմ}$
 $30 \text{ սմ} + 60 \text{ սմ}$
 $50 \text{ սմ} - 20 \text{ սմ}$

$8 \text{ դմ} - 5 \text{ դմ}$
 $5 \text{ դմ} + 5 \text{ դմ}$
 $80 \text{ սմ} - 50 \text{ սմ}$
 $50 \text{ սմ} + 50 \text{ սմ}$

$3 \text{ դմ} + 5 \text{ դմ}$
 $9 \text{ դմ} - 5 \text{ դմ}$
 $30 \text{ սմ} + 50 \text{ սմ}$
 $90 \text{ սմ} - 50 \text{ սմ}$

106 Լրացրո՛ւ վանդակները և ըստ խմբերի՝ կազմիր 4-ական հավասարություն:



Օրինակ՝ $6 + 4 = 10$
 $4 + 6 = 10$
 $10 - 6 = 4$
 $10 - 4 = 6$

107 Գծիր երեք հատված.

- Առաջինը՝ 12 սմ:
- Երկրորդը՝ առաջինից 4 սմ-ով կարճ:
- Երրորդը՝ երկրորդից 4 սմ-ով երկար: Ինչ նկատեցիր:

108 Բակում վազվզում էին 7 կարմիր և 5-ով ավելի դեղին ճուտիկ: Քանի՞ դեղին ճուտիկ էր վազվզում բակում:



109 Գիրքը, որն Անին կարդում է, 16 էջ է: Նա այսօր կարդացել է 7 էջ: Անին որոշել է վաղը ավարտել գրքի ընթերցումը: Ողջամիտ է արդյոք Անիի որոշումը:

110 Հյուսնը որոշել է գերանը կտրել 3 տեղից: Քո կարծիքով քանի՞ մասի է նա ուզում բաժանել գերանը:
.....



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱԿ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ

111 Բացահայտե՛ք մարդու կարևոր հատկանիշերից մեկը, որը թաքնված է գաղտնագրում: Խոսե՛ք դրա մասին:

Քո հասակակիցների ինչպիսի՞ արարքներն են դու համարում ազնիվ:




$9 + 9$	Ձ	$6 + 6$	Ա	$6 + 7$	Ն
$15 - 8$	Վ	$9 + 6$	Յ	$9 + 8$	Թ
$50 - 40$	ՈՒ				

12	18	13	7	10	17	15	10	13

112 Փորձե՛ք կռահել օրինաչափությունը և բացահայտել թաքնված թիվը:

7	15	8	11	6	5
11	16	5	14	7	7
9	14			7	4

Պեղք է մտածել:



- Ի՞նչ են ձեզ հուշում առաջին երկու աղյուսակները:
- Ի՞նչ գիտելիք կարող եք կիրառել:

113 Մեկ-երկու անգամ ուշադիր լսեք և պատասխանե՛ք հարցերին:



- Գնահատե՛ք Հասմիկի կատարած քայլը:
- Ձեր կարծիքով փուփուս 5-ից ավելի՞ փուչիկ կար: Ո՞ր բառն է հուշում դրա մասին:
- Ավելացա՞ն, թե՞ պակասեցին Հասմիկի փուչիկները:
- Որքանո՞վ պակասեցին Հասմիկի փուչիկները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Հաշվիր.

1. 9 և 8 թվերի գումարը:

3. 18-ից 7-ով փոքր թիվը:

2. 12 և 4 թվերի փարբերությունը:


4. 13-ից 6-ով մեծ թիվը:

5. $8 + 7 - 6$

Լուծիր խնդիրը:

6. Ափսեում կար 12 բլիթ: Տարիկը ավելացրեց ևս 8 բլիթ: Քանի՞ բլիթ եղավ ափսեում:

Իսկ հիմա համեմատիր պատասխաններդ:



Հարց	1	2	3	4	5	6
Պատասխան	17	8	11	19	9	20
Քո պատասխանը						
Ճիշտ է, թե՞ սխալ						

Եթե սխալներ ունես, ապա դրանք քննարկիր ընկերներիդ հետ:

116 Շարունակելով միմյանց՝ լրացրե՛ք աղյուսակը:

Գումարելի	4		11		9		8		10	12
Գումարելի		7		3		5		6		
Գումար	12	12	12	12	12	12	12	12	12	12

117 Երկու թվերի գումարը 17 է: Առաջին գումարելին 8 է: Ինչի՞ է հավասար երկրորդ գումարելին:
.....

118 Երկու թվերի գումարը 50 է: Ինչի՞ է հավասար առաջին գումարելին, եթե երկրորդ գումարելին 40 է:
.....

119 Երկու թվերի գումարը 40 է: Այդ թվերից մեկը նույնպես 40 է: Ո՞րն է մյուս թիվը:
.....

120 Սոնան մի թիվ է մտապահել: Եթե այդ թվին գումարենք 6, կստանանք 12: Ո՞ր թիվն է մտապահել Սոնան:
.....

121 Եթե 12–ին գումարենք Արայի մտապահած թիվը, կստանանք 20: Ո՞ր թիվն է մտապահել Արան:
.....



ԲԱՌԱՍՐԱՀ

122 Լրացրո՛ւ նախադասությունները՝ գործածելով **հայտնի գումարելի, անհայտ գումարելի, գումար** արտահայտությունները:

- ... գտնելու համար կարելի է գումարից հանել հայտնի ... :
- Անհայտ գումարելին կստանաս, եթե գումարից հանես ...:
- Եթե երկու թվերի ... հանենք նրանցից մեկը, կստանանք մյուս թիվը:

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԱՀ

123 Սոնան ունի 14 ուլունք: Դրանցից 6-ը կարմիր է, իսկ մյուսները՝ կապույտ: Դիտիր գծապատկերը և հիմնավորիր պնդումները:



- Ուլունքների ընդհանուր քանակը հայտնի է:
- Կարմիր ուլունքների քանակը հայտնի է:
- Կապույտ ուլունքների քանակը անհայտ է:
- $14 - 6$ -ը կլինի կապույտ ուլունքների քանակը:

Խնդիր: Սոնան ունի 14 ուլունք: Դրանցից 6-ը կարմիր է, իսկ մյուսները՝ կապույտ: Քանի՞ կապույտ ուլունք ունի Սոնան:

$14 - 6$

14-ից հանելով 6՝ կստանանք կապույտ ուլունքների քանակը:

Ինչ գիտելիքից ես օգտվեցի:

Հուժուժ
$14 - 6$
$14 - 6 = 8$
Պատ.՝ 8 կապ. ուլունք:




124 Արկղում կա 17 տուփ հյուսի: Դրանցից 8-ը խնձորի է, իսկ մյուսները՝ մասուրի: Մասուրի քանի՞ հյուսի կա արկղում:
.....

125 Արկղում կա 12 կգ բանջարեղեն: Դրանից 8 կգ-ը լուխկ է, իսկ մնացածը՝ վարունգ: Որքան վարունգ կա արկղում:
.....

126 Հայկը երկու օրում կարդացել է 18 էջ: Նա առաջին օրը կարդացել է 8 էջ: Քանի էջ է կարդացել երկրորդ օրը:
.....


ՄԱՐԶԱՍՐԱՀ

127 Շարունակելով միմյանց՝ լրացրե՛ք վանդակները:




- Ի՞նչ հուշումներ ես նկատել:
- Ի՞նչ գիտելիք ես կիրառելու:

128 Ըստ գծապատկերի՝ կազմիր խնդիրներ:



129 Սոնայի մոտ կա 14 կոնֆետ, իսկ Աննայի մոտ՝ 8 կոնֆետ: Քանի կոնֆետ պետք է տալ Աննային, որ նրանք ունենան միևնույն քանակով կոնֆետ:

130 Մի դուլում կա 12 կգ ալյուր, իսկ մյուսում՝ 8 կգ: Քանի կիլոգրամ պետք է վերցնել առաջին դուլից, որ դուլերում ալյուրի զանգվածները հավասարվեն:



131 **Կատակ-խնդիր:** Սարոյենք ունեն 7 սև և 12 սպիտակ ուլիկ: Ընդամենը քանի՞ սպիտակ ուլիկ ունեն Սարոյենք:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

132 Աղյուսակի տվյալներով հորինեք խնդիրներ:

ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ




	Սոնա	Հայկ	Աննա	Կարեն	Անի
Կարմիր	4		7	8	
Դեղին		6	5		9
Ընդամենը	15	18		20	17

Օրինակ՝


Սոնան դպրոցի դահլիճը զարդարելու համար բերեց կարմիր ու դեղին 15 փուչիկ: Կարմիրները 4-ն էին: Քանի՞ դեղին փուչիկ է բերել Սոնան:

133 Ելնելով Աշոտի հուշումներից և ձեր գիտելիքներից՝ լրացրեք վանդակները:

ԿԻՐԱՌՈՒՄ ԵՆՔ




Ահա իմ հուշումները:



- Ի՞նչ է հուշում Աշոտը:
- Ի՞նչ գիտելիք եք կիրառելու:

134 Բացահայտե՛ք օրինաչափությունը և ?-ը փոխարինե՛ք համապատասխան թվով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ



- Ի՞նչ հուշումներ եք տեսնում առաջին նկարում:
- Ի՞նչ գիտելիք եք կիրառելու:

135 Շարունակելով միմյանց՝ լրացրե՛ք աղյուսակը:

+	9	3	8	5	12
7	16				
8					

-	7	8	4	5	9
14	7				
15					

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Ես արդեն գիտեմ.

- Եթե գումարից հանեմ հայտնի գումարելին, կստանամ անհայտ գումարելին:

Ես արդեն կարող եմ.

- Գտնել անհայտ գումարելին:
- Բացահայտել օրինաչափություններ:
- Համեմատել իմ և ընկերոջս աշխատանքները:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

Անհայտ նվազելի

$$\square - 8 = 7$$

Անհայտ նվազելին կստանաս, եթե հանելիին գումարես տարբերությունը:

$$8 + 7 = 15$$

136 Գտի՛ր անհայտ նվազելին:

- Ի՞նչ գիտելիք ես կիրառելու:

ա) $\square - 3 = 8$ $9 = \square - 5$

$\square - 5 = 8$ $9 = \square - 7$

$\square - 7 = 8$ $9 = \square - 9$

բ) $\square - 6 = 8$ $6 = \square - 6$

$\square - 6 = 9$ $7 = \square - 7$

$\square - 6 = 10$ $8 = \square - 8$

Օրինակ՝

		$\square - 8 = 7$			
		$8 + 7 = 15$			
		Պատր.՝ 15:			

137 Ընտրի՛ր այն թիվը, որը տեղադրելով անհայտ նվազելիի փոխարեն՝ կստանաս հավասարություն:

 17, 7, 11, 16, 15, 18

$$\square - 10 = 8$$

$$\square - 4 = 3$$

$$6 = \square - 5$$

$$\square - 7 = 8$$

$$\square - 8 = 8$$

$$7 = \square - 10$$

- Ուրիշ ի՞նչ եղանակով կարող ես գտնել անհայտ նվազելին:
- Ո՞ր եղանակն է քեզ համար ավելի նախընտրելի:

138 Երկու թվերի տարբերությունը 12 է: Հանելին 8 է: Ինչի՞ է հավասար նվազելին:
.....

139 Եթե Սուրենի մտապահած թվից հանենք 12, կստանանք 4: Ո՞ր թիվն է մտապահել Սուրենը:

140 Եթե Սոնայի մտապահած թվից հանենք 8, կստանանք 6: Ո՞ր թիվն է մտապահել Սոնան:
.....


ԲԱՌԱՍՐԱԿ

141 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով նվազելի, հանելի, տարբերություն բառերը:

- Անհայր ... գրնելու համար կարելի է հանելին գումարել ...:
- $12 - 8 = 4$ հավասարության մեջ 12-ը ... է, 8-ը' ..., իսկ 4-ը' ...:

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱԿ

142 Ծառին թռած ճնճղուկներից 10-ը թռավ: Ծառին մնաց 5 ճնճղուկ: Դիտի՛ր գծապատկերը և հիմնավորի՛ր պնդումները:



- Թե քանի ճնճղուկ կար ծառին, անհայր է:
- Թռած ճնճղուկների քանակը հայտնի է:
- Մնացած ճնճղուկների քանակը հայտնի է:
- $5 + 10$ -ը ցույց է տալիս, թե քանի ճնճղուկ կար ծառին:

Խնդիր: Ծառին թառած ճնճողիկներից 10-ը թռան: Ծառին մնաց 5 ճնճողիկ: Քանի՞ ճնճողիկ կար ծառին:

5 + 10

5-ին գումարելով 10՝ կարանանք, թե քանի ճնճողիկ կար ծառին:

Լուծում
5 + 10
5 + 10 = 15
Պատ.՝ 15 ճնճողիկ:



143 Երբ Շուշանը իր գնած տետրերից 6-ը տվեց եղբորը, նրա մոտ մնաց 9 տետր: Քանի՞ տետր էր գնել Շուշանը:

144 Երբ Հայկը տուփից վերցրեց 8 մատիտ, տուփում մնաց 12 մատիտ: Քանի՞ մատիտ կար տուփում:

145 Երբ բիդոնից վերցրին 10 լ կաթ, այնտեղ մնաց 10 լ: Քանի՞ լիտր կաթ կար բիդոնում:



ՄԱՐԶԱՍՐԱՀ

146 Համեմատիր: >, <, =

14 + 2 ○ 14
14 + 3 ○ 14
14 + 4 ○ 14


14 - 2 ○ 14
14 - 3 ○ 14
14 - 4 ○ 14

14 - 2 ○ 14 + 2
14 - 3 ○ 14 + 3
14 - 4 ○ 14 + 4

147 Շարունակելով միմյանց՝ լրացրե՛ք աղյուսակը:

Նվազելի									
Հանելի	8	8	8	8	8	8	8	8	8
Տարբերություն	8	3	6	5	4	7	9	2	1





148 Շարունակելով մինյանց՝ լրացրեք վանդակները:



• Ի՞նչ հուշումներ եք տեսնում: Ի՞նչ գիտելիք եք կիրառելու:

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱԿ




149 Լրացրեք վանդակները:



• Որո՞նք են ձեր հուշումները:
• Ի՞նչ գիտելիք եք կիրառելու:



150 Պարզեք բաց թողած թիվը և կազմեք հավասարություն:



ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՐԱԿ

Ես արդեն գիտեմ.

• Եթե տարբերությանը գումարեմ հանելին, կստանամ անհայտ նվազելին:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

Անհայտ հանելի

$$16 - \square = 7$$

Անհայտ հանելին կստանաս, եթե նվազելիից հանես տարբերությունը:

$$16 - 7 = 9$$

151 Գտի՛ր անհայտ հանելին:


• Ի՞նչ գիտելիք ես կիրառելու:

- ա) $15 - \square = 6$ $9 = 12 - \square$
 $15 - \square = 7$ $9 = 13 - \square$
 $15 - \square = 8$ $9 = 14 - \square$
- բ) $18 - \square = 8$ $6 = 12 - \square$
 $18 - \square = 7$ $7 = 13 - \square$
 $18 - \square = 6$ $8 = 14 - \square$

Օրինակ՝

1	6	-	\square	=	7
1	6	-	7	=	9
Պատր.՝ 9:					

152 Ընտրի՛ր այն թիվը, որը տեղադրելով անհայտ հանելիի փոխարեն՝ կստանաս հավասարություն:

 13, 15, 70, 20, 14, 9

- ա) $18 - \square = 9$ բ) $80 - \square = 60$ գ) $7 = 20 - \square$
 $18 - \square = 4$ $90 - \square = 20$ $5 = 20 - \square$

- Ուրիշ ի՞նչ եղանակով կարող ես գտնել անհայտ հանելին:
- Ո՞ր եղանակն է քեզ համար ավելի նախընտրելի:

153 Երկու թվերի տարբերությունը 12 է: Նվազելին 18 է: Ինչի է հավասար հանելին:
.....

154 Եթե 20-ից հանենք Սոնայի մտապահած թիվը, կստանանք 6: Ո՞ր թիվն է մտապահել Սոնան:
.....

155 Եթե 80-ից հանենք Սուրենի մտապահած թիվը, կստանանք 60: Ո՞ր թիվն է մտապահել Սուրենը:


ԲԱՌՄՐԱՀ

156 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **նվազելի, հանելի, տարբերություն** բառերը:

- Անհայտ ... գտնելու համար կարելի է նվազելիից հանել ...:
- $17 - 8 = 9$ հավասարության մեջ 17-ը ... է, 8-ը՝ ...:

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԱՀ

157 Ափսեում կար 14 բլիթ: Երբ մի քանի բլիթ կերան, մնաց 6 բլիթ: Դիտիր գծապատկերը և հիմնավորիր պնդումները:



- Թե քանի բլիթ կար ափսեում, հայտնի է:
- Թե քանի բլիթ կերան, հայտնի չէ:
- Մնացած բլիթների քանակը հայտնի է:
- 14 - 6-ը ցույց է տալիս, թե քանի բլիթ կերան:

Խնդիր: Ափսեում կար 14 բլիթ: Երբ մի քանի բլիթ կերան, ափսեում մնաց 6 բլիթ: Քանի բլիթ կերան:



14 – 6

14-ից հանելով 6՝ կստանանք, թե քանի բլիթ կերան:

Լուծում					
1	4	-	6		
1	4	-	6	=	8
Պատ.՝ 8 բլիթ:					

158 Բակում խաղում էր 13 երեխա: Քիչ հետո Անին տեսավ, որ մնացել էր 8 երեխա: Քանի երեխա է հեռացել բակից:
.....

159 Խանութում կար 20 տուփ նուշի կաթ: Օրվա վերջում մնացել էր 6 տուփ: Քանի տուփ նուշի կաթ է վաճառվել օրվա ընթացքում:




ՄԱՐԶԱՍՐԱԿ


160 Գտիր անհայտ բաղադրիչը և վերականգնիր հավասարությունը:

$\square - 7 = 4$	$\square + 7 = 16$	$16 = \square + 9$	$4 = \square - 9$
$\square - 7 = 5$	$\square + 7 = 17$	$15 = \square + 9$	$3 = \square - 9$

161 Շարունակելով միմյանց՝ լրացրե՛ք վանդակները:




162 Շարունակելով միմյանց՝ կատարե՛ք գործողությունները:



ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ






163 Պարզեք բաց թողած թվերը և կազմեք հավասարություններ:



- Ինչ հուշումներ եք տեսնում առաջին նկարում:
- Ինչ գիպելիք եք կիրառելու:

164 Օգտվելով աղյուսակում բերված տվյալներից՝ կազմեք խնդիրներ և լուծեք դրանք:

ՍԵՆՇՈՒՄ ԵՆՔ

					
Կար	16	14			12
Թռավ			8	7	8
Մնաց	10	8	3	5	

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Ես արդեն գիպեմ.

Եթե նվազելիից հանեմ տարբերությունը, կստանամ հանելին:

Ես արդեն կարող եմ.

Կազմել այնպիսի խնդիր, որում հանելին անհայտ է:

165 Գտիր անհայտ բաղադրիչը և վերականգնիր հավասարությունը:

$$\begin{aligned} \square - 8 &= 4 \\ \square - 8 &= 5 \\ \square + 8 &= 16 \\ \square + 8 &= 17 \end{aligned}$$

$$\begin{aligned} 16 - \square &= 9 \\ 16 - \square &= 8 \\ 16 + \square &= 18 \\ 16 + \square &= 20 \end{aligned}$$

$$\begin{aligned} \square - 50 &= 40 \\ \square - 30 &= 50 \\ \square + 70 &= 90 \\ \square + 20 &= 60 \end{aligned}$$

166 Լրացրո՛ւ աղյուսակը:

Գումարելի	12		20
Գումարելի		17	80
Գումար	16	20	

Նվազելի	16	17	
Հանելի		8	30
Տարբերություն	8		50

167 Հանելին 40 է, տարբերությունը՝ 20: Հաշվի՛ր նվազելին:
.....

168 Նվազելին 90 է, տարբերությունը՝ 30: Հաշվի՛ր հանելին:
.....

169 Երկու թվերի գումարը 90 է: Այդ թվերից մեկը 40-ն է: Ո՞րն է մյուս թիվը:
.....

170 Պապիկն ու թոռնիկը խնամում են 8 սև և 6 սպիտակ գառնուկ: Ընդամենը քանի՞ գառնուկ են նրանք խնամում:
.....

171 Ըստ նկարի տվյալների՝ հաշվի՛ր ձմերուկի գանգվածը:




172 Պարկում կար 17 գազար: Երբ երեխաները մեկական կերան, պարկում մնաց 8 գազար: Քանի՞ երեխա գազար կերավ:
.....

173 Երբ վարպետը դույլից 12 կգ ներկ օգտագործեց, այնտեղ մնաց 8 կգ: Որքան ներկ կար դույլում:
.....


174 Հայկը գնել է 8 փուչիկ: Նույնքան փուչիկ էլ գնել է Աննան: Հայկն իր փուչիկներից երկուսը տվեց Աննային:

- Այժմ ո՞ւմ փուչիկներն են ավելի շատ:
- Հայկի փուչիկները որքանո՞վ են պակաս Աննայի փուչիկներից:
.....

175 Ի՞նչ թվեր են թաքցրել աստղերը:



176 Ըստ նկարի տվյալների՝ հաշվիր կանաչ և կարմիր ժապավենների երկարությունները:



177 Չափիր և պարզիր, թե քանի սանտիմետրով է կարմիր հատվածը երկար կապույտից:
.....









Քանի՞ եղանակով դա կարողացար անել:

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱՀ

ՍՏԵՂՇՈՒՄ ԵՆՔ

178 Աղյուսակի տվյալներով կազմեք խնդիրներ:

			
Կար	12		15
Գնաց	5	4	
Մնաց		8	10

			
Կար	12		7
Եկավ	5	4	
Դարձավ		8	10

179 Փորձեք բացահայտել օրինաչափությունը և լրացնել վանդակները:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ

15	8	7
----	---	---

5	8	13
---	---	----

5	18	13
---	----	----

14	7	7
----	---	---

6	8	14
---	---	----

6	20	14
---	----	----




16		9
----	--	---

	9	9
--	---	---

20		50
----	--	----




- Ի՞նչ հուշումներ եք տեսնում:
- Ի՞նչ գիտելիք եք կիրառելու:

180 Լրացրեք վանդակները




- Ի՞նչ հուշումներ եք տեսնում:
- Ի՞նչ գիտելիք եք կիրառելու:

181 Պարզեք բաց թողած թիվը և կազմեք հավասարություն:



182 Ընտրեք այնպիսի թվեր, որոնց տարբերությունը 7 է: Կազմեք հավասարություններ:
.....






Առաջարկեք արագ ընտրության եղանակներ:



Թվերը գրիր աճման կարգով:

183 Լրացրեք շրջանները միայն տրված բանալի թվերով:



184 **Խաղ:** Սեղանին դրեք 16 (18, 20) հաշվեձողիկ: Առաջին խաղացողը վերցնում է դրանցից մի քանիսը: Երկրորդ խաղացողը հաշվում է մնացորդը և ասում, թե քանի հատ է վերցրել առաջին խաղացողը: Այնուհետև դերերով փոխվում են:
.....

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐԱՀ


Միավոր
Տասնյակ

Սա 1 միավոր է:

Սա 10 միավոր է:
Այն 1 տասնյակ է:
10 մ. = 1 տ.

Սա 20 միավոր է:
Այն 2 տասնյակ է:
20 մ. = 2 տ.


185 Ըստ խմբերի՝ շարունակիր կազմել հավասարություններ:



Օրինակ՝
3 տ. = 30 մ.

- Քանի՞ տասնյակ է յուրաքանչյուր խումբը:
- Քանի՞ միավոր է յուրաքանչյուր խումբը:

186 Ըստ խմբերի՝ կազմիր գումարներ:



Օրինակ՝ 5 տ. + 3 տ. = 8 տ.
50 + 30 = 80

- Քանի՞ միավոր է յուրաքանչյուր խումբը:

187 Տասնյակները ներկայացրո՛ւ միավորների տեսքով:

2 տ.
3 տ.

4 տ.
5 տ.

6 տ.
7 տ.

Օրինակ՝
 $8 \text{ տ.} = 80$

188 Ներկայացրո՛ւ տասնյակների տեսքով:

90
70

50
40

30
20

Օրինակ՝
 $80 = 8 \text{ տ.}$

189 Հաշվիր:

2 տ. + 6 տ.
 $20 + 60$
8 տ. – 6 տ.
 $80 - 60$

7 տ. – 7 տ.
 $70 - 70$
7 տ. + 3 տ.
 $70 + 30$

3 տ. + 3 տ.
 $30 + 30$
10 տ. – 3 տ.
 $100 - 30$

190 Համեմատիր: $>, <, =$

2 տ. ○ 6 տ.
 $20 \text{ ○ } 60$

7 տ. ○ 10 տ.
 $70 \text{ ○ } 100$

6 տ. ○ 6 տ.
 $60 \text{ ○ } 60$

ԲԱՌԱՍՐԱՀ

191 Լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտագործելով **միավոր**, **տասնյակ** բառերը:

- 3 տասնյակը 30 ... է:
- 40 ... 4 տասնյակ է:
- Միավորները ... դարձնելով՝ հաշվարկները հեշտանում են:

192 Անվանիր թվերը նվազման կարգով և գրիր բառերով:

70, 90, 10, 40, 80,
60, 100, 50, 20, 30

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐԱՀ

193 Մայրիկը խնդրեց հայրիկին գնել 30 ձու:
Հայրիկը գնել է այսպիսի 3 տուփ ձու:
Ինչ ես կարծում, հայրիկը մայրիկի
խնդրանքը ճիշտ է կատարել:



Ահա հարցի պատասխանը գտնելու քայլաշարը.

- Քանի՞ տուփ ձու է գնել հայրիկը:
- Քանի՞ տասնյակ ձու է մեկ տուփում:
- Քանի՞ ձու է գնել հայրիկը:
- Ճիշտ է կատարել արդյոք հայրիկը
մայրիկի խնդրանքը:



194 Նկարում ՀՀ մետաղադրամներ են:
Հաշվիր, թե որքան դրամ կա
յուրաքանչյուր խմբում:



ՄԱՐԶԱՄՐԱՀ

195 ✗ դիր այն թվի վրա, որը խախտում է օրինաչափությունը:

20, 30, 40, 90, 50, 60

80, 70, 60, 50, 40, 20

196 Վերականգնիր հավասարությունը:

$$50 \bigcirc 30 \bigcirc 10 = 90$$

$$50 \bigcirc 30 \bigcirc 10 = 70$$

.....

$$60 \bigcirc 30 \bigcirc 10 = 20$$

$$60 \bigcirc 30 \bigcirc 10 = 40$$

.....

197 Արտահայտիր սանտիմետրերով:

8 դմ

5 դմ

6 դմ

3 դմ


9 դմ

7 դմ

Օրինակ՝

4 դմ = 40 սմ

198 Որոնե՞ք խմբերում տասնյակները առանձնացնելու հարմար եղանակներ:



Տասնյակները նշիր մադիպով:



- Քանի՞ տասնյակ կա յուրաքանչյուր խմբում:
- Քանի՞ տասնյակ և քանի՞ միավոր կա յուրաքանչյուր խմբում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐԱՀ

Արդեն գիտեմ.

- 10 միավորը 1 տասնյակ է:
- 1 տասնյակը 10 միավոր է:


Արդեն կարող եմ.

- Առարկաների խմբում առանձնացնել տասնյակները:
- Պարզել տասնյակների քանակը խմբերում:



ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՐԱՀ

միավոր
տասնյակ
միանիշ
երկնիշ



$4 \text{ տ. } 3 \text{ մ.} = 43$

$4 \text{ տ.} = 40 \text{ մ.}$

40 միավորը 3 միավորի հետ միասին կարդացվում է քառասուներեք և գրվում՝

43

4-ը տասնյակների քանակն է:
3-ը միավորների քանակն է:

Մեկ նիշով գրվող թվերը միանիշ են:
Երկու նիշով գրվող թվերը երկնիշ են:

199 Լրացրո՛ւ աղյուսակը՝ մեկնաբանելով քո կատարած յուրաքանչյուր քայլ:

Տասնյակ	Միավոր	Թիվը	Թվի անվանումը
	::.	75	յոթանասունհինգ
	:::		
	:::::		
	::		

200 Ասա՛ այն թիվը, որը.

